

**«Գործարարությանը զբաղվելը Հայաստանում» բարեփոխումների հուշագրի հիման վրա կազմված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիր**

N	Բարեփոխումների հուշագրով ներկայացված առաջարկ	Առաջարկվող միջոցառում	Նպատակ/ արդյունք	Պատասխանատու մարմին	Կատարման ժամկետ
1	<p><b>Հարկերի վճարում</b></p> <p>- վերացնել հարկային հաշվետվությունները անձամբ հարկային ծառայություններ ներկայացնելու պահանջը,</p> <p>- միավորել հարկային վճարումները,</p> <p>- կիրառել ռիսկի վրա հիմնված ստուգումներ/ատույիտներ</p>	<p>- Հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությունների կազմի և բովանդակության վերանայում և կրճատման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների ներկայացում՝ հաշվի առնելով «Գործարարությանը զբաղվելը» ծրագրի (Doing Business) “հարկերի վճարումը” բաղադրիչով արձանագրված ժամկետների կրճատման անհրաժեշտությունը:</p> <p>- Հարկային հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգի ներդրում:</p> <p>- ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվությունների կազմի և բովանդակության վերանայում և կրճատման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների իրականացում, մասնավորապես՝ ՓՄՁ-ի կողմից ֆինանսական հաշվետվության ներկայացման պահանջի վերացում:</p> <p>- Ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում և կիրառում (սահմանված է ՀՀ կառավարության 2007թ.-ի մայիսի 24-ի թիվ 696-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ հարկային համակարգի զարգացման 2007-2009թթ. եռամյա ծրագրի 4-րդ բաժնի 3-րդ միջոցառման 1-ին բաղադրիչ): «Ռիսկի գործոնների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության» և «Ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձի գործընթացին օժանդակող, հաշվառող» համակարգչային ծրագրերի մշակում և ներդրում:</p> <p>- Մշակել և ընդունել «Անշարժ գույքի միասնական հարկի մասին» և « Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» ՀՀ օրենքներ և դրանց կիրարկումը ապահովող այլ իրավական ակտերի փաթեթ, ինչպես նաև ներդնել սույն հարկերի վճարման էլեկտրոնային (on-line) համակարգ:</p> <p>- «Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման» ծրագրի շրջանակներում առնվազն ապահովել եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ներակնիս գործող հաշվետվությունները որպես մեկ միասնական հաշվետվություն սահմանող անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթ:</p>	<p>Հարկային վարչարարության պարզեցում, ընթացակարգերի իրականացման ժամանակի և ծախսերի կրճատում, մասնավորապես՝ արձանագրված 1120 մարդ/ժամ ցուցանիշի կրճատում մինչև 400 մարդ/ժամ:</p> <p>Բիզնեսի վարչական ծախսերի կրճատում:</p> <p>Ռիսկի վրա հիմնված ստուգումների իրականացման հնարավորությունների ընդլայնում:</p> <p>Հարկման արդարացիության բարձրացում, հարկման սկզբունքների միասնականացում, հարկային արտոնությունների համակարգի բարելավում,</p> <p>հողի և շինությունների առանձին գնահատումների արդյունքում կատարվող ծախսերի կրճատում,</p> <p>անշարժ գույքի միասնական հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի էլեկտրոնային (on-line) համակարգով վճարում,</p> <p>գույքային հարկերի, որպես սեփականությունից զանձվող հարկերի հարկման հորիզոնական և ուղղահայց արդարության սկզբունքների ամրապնդում, հարկի բեռի արդարացի և հավասարաչափ բաշխում՝ առանց նվազ ապահովված հարկ վճարողների հարկային բեռի ավելացման,</p> <p>գույքային հարկերի մատով հարկային վարչարարության պարզեցում,</p> <p>պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանցի զարգացում,</p> <p>անշարժ գույքի ամբողջական և ճշգրիտ կադաստրային գնահատում,</p>	<p>ՀՀ ՖՆ ՀՀ ԿԱ ՀՊԾ ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԿԲ ՀՀ ԷՆ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ այլ շահագրգիռ մարմիններ</p>	<p>01.01.2009  01.07.2009 01.09.2008  2009</p> <p>շարունակական  01.09.2008</p>

N	Բարեփոխումների հուշագրով ներկայացված առաջարկ	Առաջարկվող միջոցառում	Նպատակ/ արդյունք	Պատասխանատու մարմին	Կատարման ժամկետ
			հարկերի հավաքագրման ծախսերի կրճատում:		
2	<b>Միջազգային / արտաքին առևտուր</b>  - վերացնել արտահանման թույլտվությունների պահանջը,  - նվազեցնել փաստաթղթային պահանջները,  - դիտանցել մաքսային ընթացակարգերի իրականացման ժամկետները՝ որոշելու համար խոչընդոտները,  - վերացնել ապրանքների գնահատման անորոշություններ	- Արտահանման և ներմուծման գործարքների ժամանակ մաքսային հսկողության համար պահանջվող փաստաթղթերի ցանկի կրճատում (ՀՀ կառավարության 2003թ.-ի N 1779-Ն որոշման փոփոխություն):  - Մաքսային հսկողության համար պահանջվող ոչ սակագնային կարգավորման նպատակով փաստաթղթերի ցանկի վերանայում և կրճատում, մասնավորապես՝ համապատասխանության հավաստման հավաստագիրը և այլն:  - Արտահանման դեպքում մաքսային հսկողության համար ներկայիս պահանջվող 5 փաստաթղթերի փոխարեն միայն 3 փաստաթղթի ներկայացման պահանջ, իսկ ներմուծման դեպքում ներկայիս 6-ի փոխարեն 3 փաստաթղթի ներկայացման պահանջ:  - Ապրանքների գնահատման մեթոդաբանությունը և մոտեցումները դարձնել թափանցիկ, հրապարակել ՀՀ ներքին շուկայի ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա որոշվող ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ տեղեկատվությունը:  - ԱՏԳ սուբյեկտների մաքսային հսկողությունը իրականացնելու համար ներդնել տարբերակված հսկողության համակարգ, որը հիմնված կլինի ԱՏԳ սուբյեկտի գործունեության պատմության վրա:  - ՀՀ ԿԱ ՄՊԿ-ի աշխատակիցների կողմից պարտադիր կատարման համար ընդունել «Էթիկայի և վարվելակերպի կանոններ» փաստաթուղթը և այն դարձնել հրապարակային:	Մաքսային վարչարարության պարզեցում՝ պահանջվող փաստաթղթերի քանակի, ընթացակարգերի իրականացման ժամանակի և ծախսերի կրճատում:  <i>Արդյունքում կպահանջվի արտահանման համար երեք փաստաթուղթ, ներմուծման համար՝ երեք:</i>	ՀՀ ՖՆ ՀՀ ԿԱ ՄՊԿ ՀՀ ԷՆ ՊԿՄ	01.09.2008   01.01.2009  01.01.2009 (շարունակական)  01.11.2008  01.12.2008
3	<b>Ընկերության հիմնադրում</b>  - միասնական դարձնել ընկերություն հիմնադրելու ընթացակարգերը,  - վերացնել նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջը  - հանել կնիքի թույլտվության պահանջը,  - բարձրացնել համակարգչային հուսալիությունը/վստահելիությունը պետական ռեգիստրում	- Գրանցման ժամանակ իրավաբանական անձի (առևտրային կազմակերպությունների) կանոնադրություն ներկայացնելու պահանջի վերացում:  - Գրանցման ժամանակ գրավոր հայտարարություն առ այն, որ հիմնադրվող իրավաբանական անձը գործունեություն է ծավալելու համապատասխան կազմակերպարարական տեսակի համար սահմանված ՀՀ օրենսդրությանը համապատասխան (by default):  - Ցանկության դեպքում կանոնադրության ներկայացում, որի բովանդակությունը չի ստուգվում, այլ միայն գրանցվում, հաշվառվում է գրանցող մարմնի կողմից:  - Նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջի, այդ թվում՝ դրա առկայության (փաստաթղթային ապացուցման) պահանջի վերացում:  - Գրանցման ժամանակ իրավաբանական անձի կողմից կապիտալի չափի մասին տեղեկատվության ներկայացում, որը այդ պահին չի ստուգվում, այլ միայն հաշվառվում է: ( <i>Բացառություն այս կարգից պետք է արվի միայն ֆինանսական միջնորդության գործունեությանը գրառվելու նպատակով ստեղծվող իրավաբանական անձանց համար</i> )  - Իրավաբանական անձի գրանցում անհրաժեշտ նվազագույն տեղեկատվության՝ վավերապայմանների ներկայացման հիման վրա (նախատեսված ֆիրմային անվանում և այլն)՝ վարչական ակտի ընդունման և տրամադրման միջոցով (Ministerial act), որը կպարունակի առնվազն ֆիրմային անվանման և ՀՎՀՀ-ի մասին տեղեկատվություն:  - Իրավաբանական անձի կնիք ունենալու պարտադիր պահանջի վերացման նպատակով ՀՀ ՀՊԾ-ի կողմից ստեղծել աշխատանքային խումբ և եռամսյա ժամկետում միջազգային փորձագետների հետ համագործակցությամբ ներկայացնել կնիքին փոխարինող անհատականացման այլ միջոցներ (մասնավորապես՝ ստորագրությունների նմուշների էլեկտրոնային բազայի ստեղծում և ստորագրությունների ստուգման համակարգչային ծրագրերի ներդրում):  - Իրավաբանական անձի կողմից կնիք ունենալու ցանկության դեպքում դրա ստանալու թույլտվության պահանջի վերացում:  - Իրավաբանական անձանց վերաբերյալ էլեկտրոնային վարչական վիճակագրության և փաստաթղթային տեղեկատվական բազայի ստեղծում, որի միջոցով իրավաբանական անձանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի կլինի բոլոր շահագրգիռ պետ.	Ընկերության հիմնադրման ընթացակարգերի պարզեցում, ժամանակի և ծախսերի կրճատում՝ հաշվի առնելով FATF-ի և այս ոլորտում գործող այլ միջազգային կազմակերպությունների պահանջները:  Ընթացակարգերի իրականացում 2 օրում, ներկայիս 18-20 օրի փոխարեն:  Ընկերության հիմնադրման նպատակով այցելություն միայն մեկ կառույց, որը փաստաթղթերը ընդունելուց հետո ինքն է իրականացնում բոլոր ընթացակարգերը, համագործակցելով Պետ.ռեգիստրի, ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի, ՀՀ ԱՏԶ-ի, ՀՀ ռոստիկանության, Երևանի քաղապետարանի, տեղական ինքնակառավարման մարմնի և այլ մարմինների հետ:	ՀՀ ԱՆ ՀՀ ԷՆ ՀՀ ԿԲ ՀՀ ԿԱ ՀՊԾ ՀՀ ռոստիկանություն ՏԻՄ այլ շահագրգիռ մարմիններ	01.07.2009

N	Բարեփոխումների հուշագրով ներկայացված առաջարկ	Առաջարկվող միջոցառում	Նպատակ/ արդյունք	Պատասխանատու մարմին	Կատարման ժամկետ
		<p>կառավարման մարմիններին:</p> <p><i>(Օրինակ. այդ թվում՝ իրավաբանական անձի կողմից բանկերում կատարված վճարումների հավաստիության ստուգում էլ. հարցման միջոցով, արդյունքում՝ վճարման անդորագրերի ներկայացման պահանջի վերացում):</i></p> <p>Այս բարեփոխումների իրականացման համար և դրա հետ մեկտեղ գոյություն ունեցող պետական կառույցների հենքի վրա «Բիզնեսի աջակցման կենտրոնների» հիմնում, որը տնտեսվարող սուբյեկտներին «մեկ պատուհանի , մեկ կանգառի» /one stop shop/ սկզբունքով կմատուցի հանրային ծառայություններ, մասնավորապես՝ ընկերություն հիմնադրելու ողջ գործընթացի, ինչպես նաև այլ վարչական ռեգիստրներին՝ կոմունալ ծառայությունների միացումների և այլնի վերաբերյալ:</p> <p><i>Նպատակահարմար է նաև, որ այդ կառույցների համար հասանելի լինեն այլ տվյալների բազաները (օր. աշխատուժի շուկայի, անշարժ գույքի շուկայի, խորհրդատվական ընկերությունների, հաշվապահական և այլ գործարար ծառայություն մատուցող ընկերությունների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության տրամադրման հնարավորություն):</i></p> <p>- Վերացնել անհատ ձեռնարկատերերի գրանցման պահանջը՝ դրա փոխարեն ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվել ցանկացող ֆիզիկական անձանց տրամադրելով ՀՎՀՀ:</p>			
		<p>- Լիցենզավորման և թույլտվությունների ընթացակարգերի և պահանջների պարզեցում և հստակեցում:</p>	<p>Ընկերության գործունեության մեկնարկի ընթացակարգերի պարզեցում, ժամանակի և ծախսերի կրճատում:</p>	<p>ՀՀ ՖՆ ՀՀ ԷՆ ՀՀ ԿԲ ՊԿՄ</p>	<p>01.01.2009</p>
<p>4</p>	<p><b>Շինարարական թույլտվություններ</b></p> <p>- բացառել պարտադիր վճարների իրականացումը քաղաքային բարեգործական հիմնադրամներին,</p> <p>- ներդնել «մեկ պատուհանի կանգառ» կոմունալ ծառայությունների միացման համար</p>	<p>- Տես նաև 3-րդ կետի միջոցառումները</p> <p>- Քաղաքաշինական գործունեության ծավալման ընթացակարգերի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի փաթեթի մշակում և ընդունում, ոլորտի հանրային ծառայությունների մատուցում «մեկ պատուհանի, մեկ կանգառի» սկզբունքով:</p> <p>- Պետական և համայնքային հողերի օտարման և օգտագործման տրամադրման, դրանց մեկնարկային գների սահմանման, ինչպես նաև շինարարության թույլտվությունների տրամադրման թափանցիկ և հրապարակային մեխանիզմների ներդրում հանրապետության բոլոր համայնքներում: Դրանց ընթացակարգերի պարզեցում և հստակեցում, ժամկետների կրճատում, ինչպես նաև հստակ նկարագրությամբ պաշտոնական տեղեկատվության պարբերաբար տեղակայում պետական համապատասխան կառավարման մարմինների պաշտոնական էլեկտրոնային կայքերի գլխավոր էջերում:</p> <p>ՀՀ քաղաքաշինության նախարարության գլխավորությամբ գործող աշխատանքային խմբի կողմից մշակված Շինարարական թույլտվությունների և ընթացակարգերի ուսումնասիրությունների և առաջարկների փաթեթը եռամսյա ժամկետում ներկայացնել քննարկման:</p> <p>- Լրատվության միջոցներով «Երևան հիմնադրամին» փոխանցումներ կատարելը կամավոր և բարեգործական հիմունքներով լինելը հանրությանը հասանելի դարձնել:</p>	<p>Ընթացակարգերի պարզեցում և թափանցիկության բարձրացում, ժամանակի և ծախսերի կրճատում: Հասարակական վերահսկողության հնարավորության ստեղծում:</p>	<p>Երևանի քաղաքապետ</p> <p>ՀՀ ՔՆ ՀՀ ԱՆ <i>Առաջարկել ՏԻՄ</i></p>	<p>01.01.2009</p> <p>01.09.2008</p>
<p>5</p>	<p><b>Պայմանագրերի կիրարկում</b></p> <p>- արագացնել գույքի դատական կարգով հանրային վաճառքը/աճուրդը,</p> <p>-արագացնել հայցի լրացման և պատասխանողին ծանուցման</p>	<p>- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող այլընտրանքային մասնավոր ծառայությունների ստեղծման հնարավորության ուսումնասիրության իրականացում:</p> <p>- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող այլընտրանքային մասնավոր ծառայությունների ստեղծման իրավական հենքի ստեղծում:</p> <p>- Դատավարական ժամկետների վերանայում և հստակեցում՝ դատաքննության ընդհանուր ժամկետների կրճատման նպատակով:</p> <p>- Դատավարական ժամկետների պահմանման նպատակով հսկողության իրականացում:</p>	<p>Գույքի վաճառքի գործընթացի ժամկետների կրճատում: Դատական կենտրոնը որոշակիորեն հանրայինից /պետական/ տեղափոխում մասնավոր ոլորտ:</p> <p>Դատավարական ժամկետների կրճատում: Նախնական հայցի լրացման և</p>	<p>ՀՀ ԱՆ ՀՀ ԿԲ ՀՀ ՖՆ ՀՀ ԿԱ ՊԳԿՎ</p>	<p>01.01.2009</p> <p>01.07.2009</p> <p>01.09.2009</p> <p>2009</p>

N	Բարեփոխումների հուշագրով ներկայացված առաջարկ	Առաջարկվող միջոցառում	Նպատակ/ արդյունք	Պատասխանատու մարմին	Կատարման ժամկետ
	ընթացակարգը,	- Դատարաններում հայցի լրացման և պատասխանողին ծանուցում ուղարկելու ընթացակարգերի ժամկետների հստակեցման վերաբերյալ օրենսդրական փոփոխության նախաձեռնում՝ ժամկետների կրճատման նպատակով:	պատասխանողին ծանուցման ընթացակարգի տևողության կրճատում ներկայիս միջինում 40 օրից մինչև 7 օր:		01.01.2009
6	<b>Վարկերի ստացում</b> - վերացնել վարկային տեղեկատվությունը հավաքագրելու և տարածելու օրենսդրական խոչընդոտները՝ - նախատեսել գույքի և որպես գրավ օգտագործվող բոլոր տեսակի գույքի համար ավելի շուտ ընդհանուր, քան հաստուկ նկարագրություն	Վարկային տեղեկատվության շրջանառության և դրա հավաքագրման հետ կապված հարաբերությունների կարգավորման համար «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մի շարք օրենքների նախագծերի ընդունում:	Բանկային փոխառություն կամ վարկային քարտ չունեցող անձանց համար վարկային պատմության ստեղծման և ձեռնարկատերերի կողմից բիզնես հիմնելու և զարգացնելու համար անհրաժեշտ միջոցների ներգրավման հնարավորության ընձեռում:	ՀՀ ԿԲ	01.01.2009
7	<b>Ներդրողների/ փոքր բաժնետերերի պաշտպանություն</b> - բարձրացնել բացահայտման պահանջները, - բարձրացնել տնօրենի պատասխանատվությունը կորպորատիվ ակտիվների ոչ նպատակային տնօրինելու համար	- «Կորպորատիվ կառավարման զարգացման» Հայեցակարգի մշակում և ընդունում: - «Կորպորատիվ կառավարման» Օրենսգրքի մշակում և ընդունում: - Հաշվետվության ներկայացում, որը կբացահայտի ընկերությունների մասին ՀՀ օրենքների համապատասխանությունը ԵՄ ստանդարտներին, մասնավորապես բացահայտման պահանջները և տնօրենի պատասխանատվությունը կորպորատիվ ակտիվների ոչ նպատակային տնօրինելու համար:	Հայաստանյան ընկերություններում կորպորատիվ կառավարման և փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության սկզբունքների միջազգային լավագույն փորձին համապատասխանեցում:	ՀՀ ԷՆ ՀՀ ԿԲ ՀՀ ԱՆ	2009 01.01.2009
8	<b>Աշխատանքային հարաբերությունների կանոնակարգում</b> - հանել գիշերային և շաբաթվա հանգստյան օրերին աշխատանքի դիմաց վճարվող հավելավճարի պահանջը: - աշխատանքային պայմանագրերը առավելագույնս պարզեցնելու նպատակով իրավաբանական անձանց կողմից աշխատանքային հարաբերությունների կանոնակարգերի ներդրում:	ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների նախաձեռնում. - աշխատանքային պայմանագրերի կնքման և ժամկետային սահմանափակումների պարտադիր պահանջի վերացում և իրավաբանական անձանց կողմից աշխատանքային հարաբերությունների կանոնակարգերի ինստիտուտի հստակեցում: - գործուղումների ժամանակ իրավաբանական անձանց աշխատակիցներին տրվող գործուղման ծախսերի նվազագույն սահմանի վերացում: - արձակուրդի կամ նմանատիպ այլ ներքին ակտերի վերաբերյալ իրավաբանական անձի աշխատակիցներին ոչ թողթային՝ էլեկտրոնային եղանակով ծանուցման հնարավորություն սահմանում: - իրականացնել ուսումնասիրություն, որը կբացահայտի աշխատանքային օրենսդրության խոչընդոտները (այդ թվում վարչական) բիզնեսի զարգացման վրա: - հնարավորություն ստեղծել գործատուի համար սեփական հայտցողությամբ աշխատակցին ազատել աշխատանքից, պայմանով որ նման իրավունքի մասին աշխատակիցը ստորագրությամբ տեղեկացված է եղել մինչև աշխատանքի ընդունվելը: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխության նախաձեռնում:	Աշխատուժի շուկայի ճկունության բարձրացում: Տոնական և հանգստի օրերին աշխատանքի դիմաց հավելավճարի պահանջի վերացում: Աշխատանքային պայմանագրերի հնարավորինս պարզեցում: Ներդրումային միջավայրի գրավչության բարձրացում: Օտարերկրյա աշխատուժի աշխատանքի թույլտվության ժամկետային սահմանափակման վերացում:	ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԷՆ	01.07.2009
9	<b>Մեփականության գրանցում</b> - ընթացակարգերը անշարժ գույքի կադաստրում իրականացնել էլեկտրոնային	Անշարժ գույքի կադաստրում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման նպատակով եռամսյա ժամկետում ներկայացնել հստակ գործողությունների ծրագիր:	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի պարզեցում, ժամանակի և ծախսերի կրճատում: Անշարժ գույքի գործարքների	ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ ՀՀ ՖՆ	01.07.2009

N	Բարեփոխումների հուշագրով ներկայացված առաջարկ	Առաջարկվող միջոցառում	Նպատակ/ արդյունք	Պատասխանատու մարմին	Կատարման ժամկետ
	Էղանակով (on-line)		Թափանցիկության բարձրացում:	ՀՀ ԷՆ	
10	<b>Ձեռնարկության փակում/լուծարում</b> -շարունակել նոր լուծարման ընթացակարգերի իրականացումը	- «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում: <i>Իրավաբանական անձանց լուծարման ժամկետների կրճատման նպատակով լուծարման վերջնական (գրոյական) հաշվեկշիռ ներկայացնելուց հետո օրենքով նախատեսված բոլոր գործողությունները իրականացրած և ժամկետները սպառված լինելու պարագայում իրավաբանական անձի լուծարումը համարվում է գրանցված:</i>	Իրավաբանական անձանց լուծարման գործընթացների փաստացի ժամկետների կրճատում:	ՀՀ ԷՆ ՀՀ ԱՆ	01.01.2009